


Հրատարակութիւն «Փարոս» գրահամութի



(Ն Մասինեանի)

Պ Ի Մ Է Ն Օ Վ.

ՄՇՏԱԿԱՆ ԶՕՐՔ ԵՆ

ՄԻԼԻՑԻԱ.

Թարգմ. Յար. Նապեան.

Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան «Հերմէս», Մաղաթեան փող. տ. № 5.

1907

(248)

97 P. — (Ch. orkany) 1 MAR 2010
 Հրատարակութիւն «Փարոս» գրականութի
 260 0.50 1 2 3

300
 1575-ՊԻ
 351.74
 7-50



ՄՇՏԱԿԱՆ ԶՕՐՔ և
 ՄԻԼԻՑԻԱ.

1903
 1956
 1957

Թարգմ. Յար. Եսայեան.
 Ի գրույթ ուսանողի Երանգ
 Քերթում. Զուգարդի Գրքու Թիւ
 1956-1957 թ. Բեքի Գրքու Թիւ

22 JUL 2013

39421

ՄՇՏԱԿԱՆ ՉՕՐՔ ԵՒ ՄԻԼԻՅԻԱ

Իւրաքանչիւր տէրութեան, իւրաքանչիւր երկրի հարկաւոր է պաշտպանութիւն: Սա հարկաւոր է նրա համար, որպէսզի բնակիչները կարողանան հանգիստ կեդարձել զբաղուել իրանց գործերով, համոզուած, որ նրանց վրայ յանկարծակի յարձակում չի գործիլ որևէ դրացի զինուորական ուժեղ ժողովուրդ, չի խուժիլ իրանց կալուածքները, աւերելու արօտները, այրելու բնակարանները և կողոպտելու նրանց ամբողջ ստացւածքը: Հին ժամանակներում առաւելապէս հարկաւոր էր պաշտպանութիւն: Այն ժամանակներում որևէ երկրի խաղաղ բնակիչները յաճախ ենթարկուում էին յանկարծակի յարձակման եւ արշաւանքի պատերազմասէր ուժեղ հարեանների կողմից, որոնք աւերում և կողոպտում էին նրանց: Մինչև իսկ երկար ժամանակ, երբ այսպիսի արշաւանքները համարւում էին քաջագործութիւն և երբ կողոպտիչները հարուստ աւարով տուն էին դառնում, ամբողջ ազգաբնակչութիւնը հանդիպում էր նրանց որպէս հերոսների, իսկ նրանց քաջութիւնները փառաբանւում էին ժողովրդական երգերում: Խաղաղ բնակիչները, երկրագործները, շարունակ երկիւղ ունենալով իրանց կեանքի և ստացուածքի համար, վերջապէս պէտք է հոգ տանէին իրանց զերծ պահելու այդպիսի յարձակումներից, ուստի և հիմնեցին պահակախումբ: Նրանք հրաւիրեցին կամաւորներին, տունն նրանց զէնք և յանձնարարեցին—պահպանել իրանց կալուածքները և յետ մղել թշնամու յարձակումները, իսկ դրա փոխարէն կամաւորներին խնա-

մում էին բնակիչները իրանց աշխատանքով: Հէնց սա էր սկզբնական զօրքը, որ պէտք է ծառայէր խաղաղ բնակիչներին պաշտպանելուն:

Հին Ռուսիայում այսպիսի զօրքի դեր էր կատարում իշխանական պահակախումբը (княжеская дружина), բայց նա ծառայում էր ոչ միայն պաշտպանութեան համար, այլև յարձակումներ գործելու և իշխանների զուարճութեան համար: Իշխանները ծառայեցնում էին զրուժինային, թէև իրանք չէին սննդում նրան, այլ ժողովուրդը, որովհետև զրուժինայի պահպանման համար հարկ էր ժողովուրդ ժողովրդից: Բայց և այնպէս իշխանները զրուժինայի վրայ նայում էին ինչպէս իրանց սեպհական զօրքի վրայ և պատերազմի էին ուղարկում, երբ ցանկանում էին: Եւ եթէ թշնամին շատ ուժեղ էր և միայն զրուժինան չէր կարող նրան յաղթել, այն ժամանակ հրաւիրւում էր ժողովրդական զօրախումբը (ополчение). սակայն վերջինս կազմում էր միայն ժողովրդի համաձայնութեամբ: Այն ղեպքերում, երբ ժողովուրդը սիրում էր իր իշխանին, դա չէր հանդիպում դժուարութիւնների. ժողովուրդը լսում էր իշխանի կոչը և հետևում նրան: Իսկ եթէ իշխանը չէր սիրում ժողովրդից, այն ժամանակ նրան չէր յաջողւում ժողովել կարևոր թւով զօրք:

Պահակախմբի մէջ մտնելը և դուրս գալը ազատ էր և ուժով չէր կարելի որևէ մէկին պահել նրանում: Կամաւորները պայման էին կապում իշխանի հետ և ի հարկէ վերջինս էլ նրանց շնորհումներ էր անում, նրանց հետ բաժանում էր պատերազմների ժամանակ ձեռք գցած աւարը, այսպիսով աշխատելով նրանց կապել իր հետ, ուստի իշխանի և պահակախմբի մէջ գոյութիւն ունէր սերտ կապ: Պայմանը ձեռնառու էր լինում ինչպէս մէկ, նոյնպէս և միւս կողմի համար: Բայց նա մնում էր ազատ: Բացի զրուժինային, որ առաւե-

լապէս իշխանական զօրք էր, և բացի ժողովրդազօրքից (ополчение), որ կազմում էր միայն կարևոր ղեպքում, հին Ռուսիայում կային նաև վարձկան զօրքեր, որոնք կազմում էին այն ժամանակի Ռուսիայում ապրող գանազան ցեղերից:

Բոլոր այս զօրքերի գլխաւոր խնդիրն էր — խաղաղ բնակիչներին պաշտպանել արտաքին թշնամիների յարձակումներից: Բայց հետզհետէ այս նպատակը երկրորդական դարձաւ, և իշխանները սկսեցին աւելի յաճախ զօրքը ծառայեցնել իրանց անձնական նպատակների, նուաճումների և ասպատակութիւնների համար, առաւել ևս իրանց սեպհական հզօրութիւնը ամրացնելու: Նրանցից աւելի պատուասէրները արշաւանքներ էին կազմակերպում զինուորական հուշակ վաստակելու համար. միւսներին հրապուրում էր հարուստ աւարը և նրանք իրանց զրուժինայով կամ վարձկան զօրքով ձեռնարկում էին յարձակումներ և պատերազմներ: Այսպիսով իշխանները աստիճանաբար սովորում էին նայել զօրքի վրայ ոչ իբրև ժողովրդականի, այլ ինչպէս իրանց սեպհական ստացուածքի վրայ, որին նրանք կարող էին ծառայեցնել ըստ իրանց հայեցողութեան: Այս համոզմունքը հետզհետէ աւելի էր ամրապնդւում և իշխանները իրանց զօրքից պահանջում էին անպայման հպատակութիւն, սաստիկ պատժելով ըմբոստներին:

Այն ինչ ժողովուրդը շարունակում էր նայել զօրքի վրայ, ինչպէս իր պաշտպանի վրա, ուստի և յօժարութեամբ փող էր տալիս նրան պահելու համար: Ի հարկէ, զօրքը պիտի լինէր ժողովրդի բարեկամը և հայրենիքի պաշտպանութիւնը: Բայց իսկապէս բոլոր պետութիւններում, որտեղ աստիճանաբար կազմակերպվեց մշտական զօրք, պետերը, իշխանները և արքաները սկսեցին նրան ծառայեցնել իրանց անձի համար և իրանց քմահաճոյքի համեմատ: Կամաց կամաց զօրքն

էլ մոռացաւ իր սկզբնական նշանակութիւնը՝ ծառայել ժողովրդին, և սկսեց ծառայել պետերին. նա դադարեց ժողովրդական զօրք լինելուց: Զինուորական ծառայութեան մէջ մտած նորընտիր զինուորին ոչ միայն սովորեցնում էին զէնք գործածել, այլ և աշխատում էին նրա մէջ ներշնչել անպայման և լիովին հնազանդութիւն իշխանութեան իւրաքանչիւր հրամանին: Նրան կապում էին երդումով, որը պարտաւորեցնում էր սեպհական կառքից բացարձակ հրաժարում և անպայման հպատակութիւն: Այն բոլորից, երբ նա հագնում էր զինուորի զգեստը, կտրւում էր նրա կապը ժողովրդի հետ, որի միջից ինքը ելած էր, և այն, ինչ որ մօտ էր ժողովրդին, դադարում էր նրան մօտ լինելուց: Սւայն խորթութիւնը հասաւ այն աստիճանի, որ զինուորը առանց մտածելու, առանց ղեկավարձութեան կատարում էր հրամանը նոյն իսկ այն ժամանակ, երբ այդ հրամանը կորստաբեր էր իրան մօտիկ մարդկանց համար:

Հէնց միայն սա էլ հարկաւոր էր երկրի տէրերին: Ժողովրդի հետ իր կապը կտրած զինուորներից բաղկացած զօրքը արդէն չէր կարող լինել ժողովրդի պաշտպանը, այլ միայն տէրերի պաշտպանն էր: Պատահում էր յաճախ, որ ժողովրդի և իր կառավարիչների—իշխանների, թագաւորների ցանկութիւնները տարբերւում էին: Սակայն, եթէ թագաւորը ուզենար որևէ բանի համար պատերազմել, նա կարող էր իր հպատակների ցանկութեանը չը համակերպել: Նա ունէր զօրք, որին երդումով պարտաւորեցրել էր անտրտունջ հպատակել, և թէպէտ այս զօրքը պահւում էր ժողովրդի աշխատած փողերով, բայց նա հնազանդւում էր ոչ թէ ժողովրդին, այլ թագաւորին և թագաւորը կարող էր նրան պատերազմ ուղարկել, երբ ցանկանար, և մինչև անգամ հակառակ ժողովրդի ցանկութեան և

կամքի: Եւ եթէ ժողովուրդը սկսում էր տրտնջալ, անբաւական կառավարիչներից, յուզւել, և համարձակէր բարձր արտայտել իր դժգոհութիւնը, այն ժամանակ հէնց այդ ժողովրդի հաշուով ապրող զօրքը մեծաւորի հրամանով գնում էր խաղաղեցնելու դժգոհներին, և մոռանալով այն, որ իր առաջ գտնւում են հէնց իր եղբայրները, նրանց հետ վարւում էր ինչպէս թշնամիների հետ, հալածում էր նրանց:

Ահա թէ ինչու զօրքը դադարեց ժողովրդի բարեկամը, նրա պաշտպանը լինելուց:

Բայց արդեօք ամեն տեղ այսպէս եղաւ: Այո, ամեն երկրում, ամեն պետութեան մէջ, որտեղ զօրքը մոռանալով իր անմիջական և գլխաւոր պարտականութիւնը—այսինքն ծառայել ժողովրդին, պաշտպանել նրան,—ծառայում էր պետերին, սրանց հպատակներին ու օգտին, և անտրտունջ կատարում էր նրանց հրամանները, չը քննադատելով, թէ նրանք լաւ են թէ վատ: Ամենուրեք, որտեղ զօրքը թագաւորի պատուարն էր, ժողովուրդը երկար և ծանր տանջւել է և միայն արիւնահեղ կռից յետոյ նա կարողացել է մի քանի երկրներում ազատութիւն ձեռք բերել և ստիպել է պետերին լսել ժողովրդի ձայնը և հակառակ չերթալ նրա կամքին: Այսպէս է եղել գերմանացոց, Ֆրանսիացոց, իտալացոց և այլ ազգերի մօտ: Թագաւորները իրանց տրամադրութեան ներքոյ ունենալով հնազանդ զօրք, չէին վախենում ոչ ժողովրդի դժգոհութիւնից և ոչ զարոյթից: Նա պատրաստի պատասխան ունէր ժողովրդի բոլոր պահանջներին—գնդակ և սուլին: Եւ ժողովուրդը շատ արիւն թափեց, մինչև որ նա յաղթահարեց այդ անուշիկ ոյժը:

Անգլիացիները չունեն և չեն ունեցել մշտական զօրք, ուստի և անգլիացիները վաղուց արդէն օգտւում են այն ազատութիւններով, որոնք այժմ միայն խոս-

տացված են ուսումնական ժողովրդին Արքայական մանիֆեստով: Երբ անգլիացիները ցանկացան ազատ լինել և այդ պահանջներն իրանց թագաւորից, այն ժամանակ թագաւորը չունենալով իր տրամադրութեան ներքոյ հնազանգ զօրք, որին հրամայէր գնդակահարել անհնազանգ հպատակներին, ստիպւած եղաւ զիջել նրանց և ակամայից համաձայնել նրանց պահանջներին հետ: Եւ թէպէտ յետոյ անգլիական թագաւորները շատ անգամ փորձեցին ժողովուրդից խլել այն, ինչ արդէն տրւած էր, բայց այդ բանը երբէք չէր յաջողում:

Այսպէս ուրեմն, զօրքը՝ ժողովրդի բարեկամը լինելու փոխարէն կարող է դառնալ նրա թշնամին, եթէ մոռանայ այն կապը, որը գոյութիւն ունի իր և ժողովրդի մէջ, եթէ մոռանայ այն, որ ինքը պիտի ծառայէ ժողովրդին, որը նրան պահում էր իր աշխատած փողերով:

Պաշտպանելով ժողովրդին, պաշտպանելով հայրենիքը արտաքին թշնամիներէր, զօրքը իհարկէ կը լինի ժողովրդի բարեկամը: Այնտեղ, որտեղ ժողովրդի և նրա միջև պահպանուած է սերտ կապ, զօրքը ծառայում է ժողովրդին և կարող է համարուել ժողովրդական զօրք:

Բոլոր տէրութիւնները մեծ փողեր են վատնում մշտական զօրքի պահպանութեան վրայ: Ամեն տեղ գոյութիւն ունի պարտաւորական զինւորական ծառայութիւն, բացասութեամբ Անգլիայի և Հիւսիս-Ամերիկեան Միացեալ Նահանգների: Անգլիացոց զօրքը վարձկան է. այնտեղ իւրաքանչիւր ցանկացող կարող է դառնալ զինւոր, բայց զրա համար չի կարելի ոչոքի ստիպել: Անգլիական պետութիւնը իրաւունք չունի ժողովրդի միջից մարդկանց վերցնել իր զօրքի համար և չի կարող զօրքը տրամադրել իր բմահաճոյքին կամ ժողովրդի կամքին հակառակ: Ամեն տարի անգլիական

պարլամէնտը կամ ժողովրդի ներկայացուցիչների ժողովը սահմանում է անգլիական մշտական զօրքի կազմը: Եթէ պարլամէնտը իր համաձայնութիւնը չը տայ այդ զօրքը պահպանելուն, այն ժամանակ զօրքը կարձակւի, ուստի և Անգլիայում զօրքը ամբողջապէս կախումն ունի ժողովրդի կամքից:

Քանի որ Անգլիայում մշտական զօրքը քիչ է, և եղածն էլ բաժանւած է առաւելապէս մի քանի գլխաւոր քաղաքներին, ուստի ընդհանրապէս զինւորական զգեստները շատ քիչ են աչքի ընկնում անգլիական քաղաքների փողոցներում: Նոյնպէս պիտի նկատել, որ անգլիական զինւորները իրաւունք չունեն զէնքը կրել, եթէ միայն չեն գտնուում պաշտօնական պարտականութիւնները կատարելու միջոցին: Օրինակ, զբոսանքի գնալով, զինւորը չը պէտք է վերցնէ իր հետ զէնքը, իր հետ չը պէտք է ունենայ ոչ սուրը, ոչ սուրինը, և ոչ էլ նոյնիսկ կարճիկ սուսերը. իսկ սպաները, գեներալները միայն ծառայութեան միջոցին են կրում զինւորական հագուստը, իսկ սովորաբար նրանք լինում են քաղաքացիական շորերով:

Ուրեմն Անգլիայում զինւորագրութիւն գոյութիւն չունի. զօրքի մէջ մտնում են յօժար կամքով:

Իւրաքանչիւր ոք, որ ցանկանում է զինւորական ծառայութեան մտնել, ներկայանում է գլխաւոր կամ տեղական զինւորական շտաբին և գրում է զինւոր: Սակայն, նա այդ կարող է կատարել նաև պոստի գրասենեակի միջոցով, որը Անգլիայի իւրաքանչիւր գիւղում և շէնում գտնուում է: Զօրքի մէջ մտնել ցանկացողը պոստատանը վերցնում է բլանկ խնդրի համար և նրա վրայ նշանակում է իր ցանկացած զօրամասը, այսինքն—կամ հետեակ կամ նաւատորմիդ, կամ հեծելազօր և կամ ուժաձիգ: Բացի այդ նա պիտի գրէ իր

հասակը և այլ յատկանիշներ: Ստորագրելով այս խընդիրը, նա պոստով ուղարկում է շտաբ, որտեղից և ստանում է պատասխան, թե երբ պէտք է նա ներկայանայ քննութեան: Եթէ հարկաւոր են զինւորները, և ներկայացած անձը համապատասխան է, նրան ընդունում են զօրքի մէջ, իսկ հակառակ դէպքում յետ են ուղարկում:

Հին ժամանակներում, ճիշտ է, Անգլիայում զիմում էին զանազան խորամանկութիւններով դէպի զինւորական ծառայութիւն գրաւելու համար.— արբեցնում էին և խաբելով կորզում էին համաձայնութիւն՝ զինւոր դառնալու: Վաղուց արդէն այդպիսի միջոցների չեն դիմում: Ընդ սմին անգլիական դատարանը սաստիկ պատժում է այսպիսի խաբէութեան համար: Խաբելու էլ կարիք չը կայ, քանի որ միշտ կան մարդիկ, կամ կարիքից ստիպւածներ կամ թէ այնպիսիներ, որոնք զինւորականութիւնը գերադասում են ուրիշ գործից: Սակայն, զինւորական ծառայութեան մտածը սկզբում կապուած չէ համարւում և երեք ամսի ընթացքում կարող է թողնել բանակը, եթէ զղջայ ծառայելը, միայն նա պէտք է վճարէ այսպէս կոչւած փրկանք, մօտ 100 ռուբլի: Երեք ամսից յետոյ եթէ զինւորը մնայ ծառայելու, նա պէտք է մնայ զօրքի մէջ 5--7 տարի, և պահեստի զօրքի մէջն էլ կը գրւի մօտ 5 տարի:

Գտնելով բանակի մէջ, զինւորը ստանում է ռոճիկ օրական մօտ 50 կոպէկ, ամեն ինչ պատրաստ, ապա զօրքից դուրս գալով նա ստանում է իւրաքանչիւր ծառայած տարու համար յաւելեալ մօտ 30 ռուբլ: Եթէ ծառայութեան ժամանակ զինւորը կատարում է որևէ ակտիւ աշխատանքներ, օրինակ, աշխատում է արհեստանոցներում կամ ծառայում է սպային (денщикъ), այն ժամանակ նա ստանում է յաւելեալ վարձատրութիւն:

Անգլիայում զինւորները ապրում են համեմատաբար լաւ: Նրանք ստանում են լաւ կերակուր, ունեն մաքուր ընդարձակ բնակարան և բացի այդ, ստանում են ոռճիկ: Նրանց հագուստը սոյնպէս միշտ լաւ է և յարմար: Բայց չը նայած այս ամենին անգլիացիները շատ դժկամօրէն են մտնում զինւոր և բանւորը այն ժամանակ է միայն զօրքի մէջ գրւում, երբ նրան ընկճում է ծանր կարիքը:

Անգլիայում բացի փոքրաթիւ մշտական զօրքից կան նաև օժանդակ զօրքեր—կամաւորներ և միլիցիա: Միլիցիա կոչւում է այն զօրքը, որը կազմակերպւում է միայն պատերազմի միջոցին: Խաղաղ ժամանակ ծառայութեան մէջ մնում են միայն միլիցիայի փոքրիկ կազմակերպութիւնը: Այսպիսի զօրք գոյութիւն ունի Հիւսիսային Ամերիկայում: Անգլիայում նրանք պարտաւորւում են նրա մէջ ծառայել վեց տարի, այսինքն, ծառայութեան մէջ նրանք գտնւում են միայն 2 տարի, իսկ չորս տարին գտնւում են պահեստում: Միլիցիան էլ լրացւում է վարձու զինւորագրութեամբ:

Կամաւորներ կամ վօլոնտեօրներ հրաւիրւում են այն ժամանակ, երբ Անգլիան կարիք ունի պաշտպանւելու: Նրանք ծառայութեան են մտնում զինւորական հրամանատարի հետ համաձայնութիւն կապելով և միշտ կարող են հեռանալ բանակից, բայց թէ պարտաւոր են այդ մասին նախազգուշացնել հրամանատարին երկու շաբաթ առաջ: Կամաւոր զօրքը Անգլիային շատ անգամ է պիտանի եղել: Ազատ մարդիկ յօժար կամքով գնալով իրանց հայրենիքը պաշտպանելու, ի հարկէ նրան կարող են մեծ օգուտ տալ, եթէ միայն նրանք լաւ են վարժւած և ունեն լաւ ղեկավարներ: Անգլիացի կամաւորները նպաստեցին անգլիական զօրքի կազմի մէջ շատ բարեփոխումներ մտցնելուն և զինւորութեանը,

որովհետեւ նրանք առանց քաշելու ցուցադրում էին նկատած պակասութիւնները, իսկ անգլիական ժողովուրդը իմանալով այդ թերութիւնների մասին, պահանջում էր վերացնել նրանց:

Ամերիկացիների մօտ զօրքը բաղկացած է ամբողջովին կամաւորներից, բայց և այնպէս ամերիկացիները հպարտութեամբ են համեմատում իրանց փոքրաթիւ զօրքը Եւրոպական պետութիւնների ահելի բանակների հետ: Զօրքի քանակութեամբ Հիւսիս-Ամերիկային Միացեալ Նահանգները յետ են մնացած միւս բոլոր պետութիւններից, բայց պետութեանը մատուցած օգտակար ծառայութեամբ ամերիկացիները բոլորից առաջ են անցել: Շնորհիւ նրան, որ նրանք չունեն մշտական զօրք, այլ միայն միլիցիա, զինւորագրութիւնը նրանց մօտ ժողովրդից չէ խլում երիտասարդ հասակի և առողջ՝ օգտակար աշխատաւորներին, ինչպէս որ դա կատարւում է ուրիշ երկրներում: Այս հանգամանքն էլ ամերիկացիներին հնարաւորութիւն է տալիս իրանց բոլոր ուժերը թափել օգտակար աշխատանքի վրայ, առևտուրի և արդիւնաբերութեան, երկրագործութեան և այլն զարգացման վրայ, իսկ ժողովրդական բարեկեցութեան աւելացումը իր հերթին հնարաւորութիւն է տալիս անցնել առանց փոխառութեանց, առանց պարտքերի: «Զօրքի թւով մենք վերջինն ենք, բայց մենք առաջինն ենք օգտակար աշխատանքով և հարստութեամբ» հպարտօքն ասում են ամերիկացիները:

Սակայն, իւրաքանչիւր ամերիկեան քաղաքացի իր պարտքն է համարում զէնք վերցնել և դուրս գալ իր հայրենիքի պաշտպանութեան համար, երբ նա ենթարկւում է վտանգի: Սրա համար իւրաքանչիւր ամերիկացի մանուկ փոքր հասակից սովորում է զէնք գործածել: Երեխաները դպրոցներում կազմակերպւում են զինւորական խմբեր և հրաւիրում են վարժեցնելու զինւո-

րական արուեստին ծանօթ որևէ անձի: Շաբաթը երկու անգամ մի ժամ, նրանք պարապւում են զինւորական վարժութիւններով, քայլափոխութեամբ, (маршировка) հրացանի գործածութեամբ և սրախաղացութեամբ (фехтованием) և ամեն տարի ամառը գնում են որևէ զօրաբանակ, առաւելապէս ծովափ և այնտեղ վարժւում են հրացանաձգութեան և լողալուն:

Միացեալ Նահանգներում զէնքի վաճառումն և կրելը օրէնքով չեն արգելւում և նոյնիսկ խրախուսւում են օրէնքից: Այս օրէնքներում կայ այսպիսի պարագրաֆ. — «Քանի որ կանոնաւոր կազմակերպւած միլիցիան հանդիսանում է ազատ պետութեան ապահովեան գրաւականը, ուստի ժողովրդից չը պէտք է խլել իրաւունքը — իր մօտ պահելու և կրելու զէնք»:

Այսպիսով Միացեալ Նահանգների իւրաքանչիւր քաղաքացի կարող է ունենալ զէնք, միայն թէ դա յայտնի լինի, հակառակ դէպքում նա կը վճարէ տուգանք: Զինւորական ծառայութեան ընդունակ բոլոր ամերիկա-քաղաքացիները, նմանապէս այն նորեկները, որոնք ցանկութիւն են յայտնել դառնալ ամերիկա-քաղաքացիներ, 18—45 տարեկան հասակում գրւում են միլիցիայի մէջ: Միլիցիոնէրական ծառայութիւնից ազատւում են պետական ծառայութեան մէջ գտնւողները, երկաթուղու ծառայողները, նմանապէս և այն մարդիկ, որոնց կրօնական համոզմունքները թոյլ չեն տալիս պատերազմել և կամ ծառայել զինւորական հիմնարկութիւններում:

Միլիցիան լինում է կազմակերպւած և չը կազմակերպւած: Առաջնում գտնւում են այնպիսի մարդիկ, որոնք յօժարակամ համաձայնել են 5 տարի ծառայել: Սրա համար նրանք պիտի ժողովեն տարեկան ոչ պակաս 24 անգամից սովորելու համար և բացի այդ ամեն տարի հինգ օր պիտի անցկացնեն լազէրում:

Ամերիկական միլիցիայի ստորին աստիճանաւորները իրանք են ընտրում իրանց օֆիցէրներին մինչև կապիտանի աստիճանը, իսկ շտաբ-օֆիցէրներին ընտրում են օֆիցէրները: Միլիցիօնէրները կազմելով ուրոյն զօրաբանակի խմբեր, ուժիկ ստանում են միայն այն ժամանակ, երբ նրանք մասնակցում են պատերազմի: Իսկ մշտական զօրքը, (ընդամենը 30,000), որը ցրւած է Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների ընդարձակ տարածութեան վրայ, բաղկացած է միմիայն կամաւոր վարձւած զինւորներից: Նրանցից իւրաքանչիւրին ուժիկ է տրւում ամսական մօտ 30 րուբլի, ամեն ինչ պատրաստի: Ամերիկացի զինւորը կերակրւում է լաւ, ունի լաւ բնակարան և երբէք իր վրայ չէ կրում ոչ մի ծանրութիւն: Զինւորական ծառայութեան մէջ գտնւելով նա իրան համարում է նոյնպիսի ազատ և հաւասարաիրաւունք քաղաքացի, երբէք չէ ցոյց տալիս իր մեծաւորին ստրկական հնազանդութիւն, և ոչ մի ամերիկացի զօրապետ չի էլ մտածիլ իր զինւորներից պահանջել այդ բանը: Բայց սա երբէք չի խանգարում ամերիկայի զինւորներին իրանց հայրենիքի համար կռւել քաջօրէն և անձնուրաց կերպով, երբ դա կարևոր է և դեռ երբէք, ոչ մի պատերազմում ամերիկացիները իրանց չեն խայտառակել: Ամերիկայի զինւորը շատ կը զարմանայ, եթէ նրան ասեն, որ չը պիտի դատողութիւն անէ, այլ միայն հնազանդութիւն, ինչ տեսակի էլ որ հրամաններ տան նրան.—ընդհակառակն, ինչպէս զօրքի մէջ, այնպէս նրանից դուրս նա մնում է նոյն կենդանի մարդը, ոչ թէ անբան և անհոգի մեքենայ, և կռուելու գնալով նա գիտակցում է, թէ ինչի համար է կռոււմ.—պաշտպանելով իր հայրենիքը, ամերիկայի զինւորը պաշտպանում է և իր ազատութիւնը, իր սեպհական բարեկեցութիւնը, իր իրաւունքը՝

պարծենալու նրանով, որ ինքը քաղաքացի է մեծ երկրի, ազատ Ամերիկայի: Նա գիտակցօրէն և յօժարակամ է գնում պատերազմ, երբ կարևոր է համարում այդ իր երջանկութեան, պատուի և հայրենիքի օգտի համար, բայց նրան չի կարելի ստիպել պաշտպանել մի գործ, որը դատապարտւում է իր խղճի կողմից, և ոչ մի երգում չէ կաշկանդում նրա ազատութիւնը և չի կարող նրան ստիպել անելու այն, ինչ որ նա համարում է ֆլասակար երկրի համար և անպատուաբեր իր արժանիքին, որպէս ամերիկաքաղաքացուն և ընդհանրապէս որպէս մարդուն:

Երբ միլիցիօնէրը կոչւում է ծառայութեան, երբէք հետո չէ ուղարկւում իր հայրենի տեղից և սովորաբար հայրենի երկրում ծառայում է իր երկրացիների հետ: Հասկանալի է, որ սա վերաբերում է միայն խաղաղ ժամանակին: Պատերազմի միջոցին այլեւրպէս գործը: Միլիցիօնէրը գիտէ, որ իր պարտքն է պաշտպանել հայրենիքը արտաքին թշնամուց, ուստի և նա գնում է այնտեղ, որտեղ թշնամին սպառնում է յարձակմամբ: Բայց եթէ իշխանութիւնը մտածէ միլիցիան գործադրել այսպէս կոչւած ներքին թշնամիների դէմ, որոնց նա անուանում է իր հրամաններից դժգոհ, տիրող կարգ կանոնից անբաւական մարդկանց, որոնք բողոքում են ապօրինութիւնների դէմ, այն ժամանակ հազիւ թէ նա կարողանայ ստիպել եղբօրը գնալ եղբօր դէմ: Իշխանութիւնը շատ լաւ է հասկանում այդ բանը, ուստի որեւէ տեղում դժգոհներին խաղաղացնելու համար կանչում է ուրիշ տեղից զօրքեր: Մեզ մօտ Ռուսաստանում մինչև անգամ կանոն կայ,—ըստ որի զինւորը երբէք իր ծառայութիւնը չէ աւարտում այն տեղում, որտեղ նա ծնւել է, կամ թէ մօտ է իր հայրենի գիւղին, իր մօտաւորների մէջ: Այսպիսով, նա կտրւում է իր հայրենի օջախից և յաճախ նա մոռա-

նում է, որ ինքը դուրս է եկել նոյն ժողովրդի միջից, որի դէմ նա երբեմն բարձրացնում է զէնքը, ինչպէս թշնամու դէմ:

Այսպէս ուրեմն զօրքը պիտի լինի ժողովրդական: Նա պիտի ծառայէ ժողովրդին, որը իր աշխատանքով է պահում նրան և միայն այն ժամանակ նա իր պարտքը կատարած կը լինի ազնուութեամբ և կը լինի աշխատաւոր ժողովրդի ու հայրենիքի պատուարը: Այնտեղ, որտեղ ժողովրդի և զօրքի մէջ եղած կապը չէ կտրւում, որտեղ իւրաքանչիւր զինուոր յիշում է, որ ինքը առաջ եղել է գիւղացի, բանւոր և նորից այդ կը դառնայ— միայն այնտեղ զօրքը հանդիսանում է ժողովրդի անկեղծ բարեկամ և կը լինի նրա իսկական պաշտպանը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0219555

Նիկ. Մատինեանի հրատարակութեամբ լոյս են տեսել
հետեւեալ գրքոյկները.

1. Կլար Յեսկին. Կինը և նրա տնտեսական
գրութիւնը-թարգ. Յար. Եսայեանի.
42 էրես Գինն է 15 Կ.
2. Բ. Շսերն. Հիւանդ մարդը-կուլտուրական
պատկերներ թիւրքիայից. թարգ. Լ.
Բաբայեանի-Սուլթանի պատկերով,
55 մեծ. էրես Գինն է 30 Կ.
3. Լ. Կրժելիցկիյ. Բնչպէս են ծնունդ առ-
նում գաղափարները-թարգ. Ստ. Շա-
հումեանի 36 էրես. Գինն է 10 Կ.
4. Խան-Ազաւ. Բնչպէս պէտք է կազմել
սահմանագրութիւնը. 56 էր. Գինն է 10 Կ.
5. Իերեմիկ. «Ոչ այս աշխարհից» 30-էր. 10 Կ.

դիմել՝ Книжный кіоскъ «Фаросъ» Ник. Матинянцъ, Эриванск.
площ. Тифлисъ.

Գինն է 5 կոպ.

Գումարով զնոյներին 25% զեղջ